



## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Առաջին շոգեքարշը մարդիկ սրեղծել են 1804 թվականին: Նրա աշխատանքի սկզբունքը հետևյալն էր. փարբեր վառելիքներ օգտագործելով ջուրը փաքացվում էր և առաջացած ջրային գոլորշին օգտագործվում էր մեքենայի անիվները պտտեցնելու համար: Այսինքն՝ կատարվում էր ջերմային էներգիայի փոխակերպում մեխանիկական էներգիայի: Պատմությունը ցույց տվեց, որ նրանք այնքան էլ արդյունավետ չեն և կամաց կամաց սկսեցին հրաժարվել նրանց օգտագործումից: Սակայն մինչև օրս էլ կան գործող շոգեքարշեր Հնդկաստանում և Չինաստանում:

Ներքին այրման շարժիչով աշխատող առաջին ավտոմոբիլը սրեղծվել է 1886 թվականին: Այսօր ներքին այրման շարժիչով են աշխատում, բոլոր ավտոմեքենաները, եթե չհաշվենք վերջին ժամանակներս սրեղծված էլեկտրոմոբիլները:

Առաջին ջերմաքարշը սրեղծվել է 1887 թվականին: Ջերմաքարշը ներքին այրման շարժիչով աշխատող լոկոմոտիվ է: Լոկոմոտիվը քարշի տրանսպորտային միջոց է ռելսային ուղիով գնացք կամ վագոններ տեղափոխելու համար: Այն արագորեն կատարելագործում էին և արդեն 1912-1913 թվականներից սկսեցին օգտագործել դրանք մարդկանց և բեռներ տեղափոխելու համար: Համաշխարհային բանկի տվյալներով աշխարհի երկաթգծերով այսօր ընթանում է շուրջ 90 հազար ջերմաքարշ: